Social Security

Ինքնության Գողություն եւ Ձեր Սոցիալական Ապահովության Համարը

www.socialsecurity.gov

Ինքնության Գողություն եւ Ձեր Սոցիալական Ապահովության Համարը

Ինքնության գողությունը Ամերիկայում ամենաարագ աճող հանցագործություններից մեկն է: Երբ ձեր Սոցիալական Ապահովության համարը ընկնում է անպարկեշտ մարդու ձեռք, նա կարող է իմանալ ու օգտագործել ձեր անձնական այլ տեղեկությունները: Շատ դեպքերում ինքնության գողերը, օգտվելով ձեր համարից եւ ձեր լավ վարկից (credit), դիմում են ձեր անունից տակ վարկերու թուղթ ստանալու համար: Այնուհետեւ, նրանք օգտվում են վարկերու թուղթերից եւ չեն վճարում պարտքերը: Դուք տեղեկանում եք միայն այն ժամանակ երբ ձեզ մերժում են վարկ տալ: Կամ երբ սկսում եք ստանալ հեռախոսազանգեր անծանոթ վաճառատուներից, որոնք վճար են պահանջում այն ապրանքների համար, որոնք դուք երբեք չեք գնել:

Այս անպարկեշտ անձը ձեր անունն ու Սոցիալական Ապահովության համարը ապօրէնի օրէն գործածելով շատ մեծ խնդիրներ կը յառաջացնէ ձեզ համար:

Ձեր համարը խիստ գաղտնի է

Ձեր Սոցիալական Ապահովության համարը եւ մեր ունեցած տեղեկությունները գաղտնի են: Մենք ձեր համարը ոչ մեկին չենք տալիս, բացի օրենքով նախատեսված դեպքերում: Դուք պետք է զգույշ լինեք թե որոնց ցոյց եք տալիս ձեր համարը (նույնիսկ եթե այն գործածում եք նպաստի կամ ծառայության համար):

Մի թույլատրեք ուրիշներին գողանալու ձեր համարը

Ինքնության գողերը ձեր անձնական տեղեկությունը ստանում են հետեւյալ ձեւերով.

- Գողանալով ձեր դրամապանակները, պայուսակները եւ նամակներերը (դրամատան եւ վարկերի հաշուեթղթեր, վարկի հարցարաններ, հեռախոսային քարտեր եւ հարկային տեղեկություն).
- Գողանալով ձեր անձնական տեղեկությունը, որ դուք դնում եք համացանցի անապահով վայրում, գործնական կամ արհեստական փաստաթղթերից՝ աշխատանքի վայրում կամ էլ ձեր տնից.
- Ձեր աղբը խառնում անձնական տեղեկություն գտնելու նպատակով.
- Ձեւանալով օրինական պաշտօնեայ (օրինակ գործատու կամ վարձատու) պահանջում են անձնական տեղեկություն.
- Գնելով անձնական տեղեկություն «ներքին» աղբյուրներից: Օրինակ, ինքնության գողը կարող է կաշառել խանութի մը աշխատողին ստանալու համար ձեր այն տեղեկությունները որոնք դուք հայտնած եք ապրանքների, ծառայությունների կամ վարկերի դիմումներու ժամանակ:

Զգուշացե՛ք ու ապահով պահեք ձեր Սոցիալական Ապահովության քարտն ու համարը որպէսզի չգողանան

Նոր աշխատանքի ընդունվելուց ցույց տվե՛ք ձեր համարը ձեր գործատուին, որպեսզի ձեր աշխատանքային պատմությունը շիտակ լինի: Այնուհետեւ դրե՛ք այն ապահով տեղ մը: **ՍԻ՛** կրեք ձեր համարը ձեզ հետ:

Ինչպե՞ս կարող եմ հայտնել թե իմ համարը ուրիշ մեկը օգտագործում է

Դուք պետք է գանգատ ներկայացնեք Դաշնակցային Առեւտրային Հանձնաժողովին (Federal Trade Commission)

- Համացանցով՝
  www.consumer.gov/idtheft
- Հեռախոսելով՝
  1-877-IDTHEFT (1-877-438-4338)
- TTY-ով՝
  (խուլերու եւ դժուար լսողներու համար)
  1-866-653-4261

Եթե դուք կարծում եք թե ուրիշ մի անձ աշխատում է ձեր համարով, դուք պետք է դիմեք Սոցիալական Ապահովության: Ստուքելու միջոցներից մեկն է քննել ձեր տարեկան *Social Security Statement* (*Սոցիալական Ապահովության Հաշուեցոյցը*): Այս *Հաշուեցոյցը* նշում է այն հասոյթը որ ներկայացուել է ձեր Սոցիալական Ապահովության համարով: Սխալ գտնելու դեպքում, անմիջապես դիմե՛ք Սոցիալական Ապահովության:

Ի՞նչ պետք է անեմ եթե կարծում եմ թէ մեկը օգտագործում է իմ համարը եւ ինձ համար առաջացնում է վարկի հետ կապված խնդիրներ

Սոցիալական Ապահովությունը չի կարող շտկել ձեր վարկի հարցերը եթե մի օտար անձ օգտագործել է ձեր Սոցիալական Ապահովության համարը վարկ ձեռք բերելու նպատակով: Ձեր վարկի տվյալները շտկելու նպատակով.

- Զանգահարե՛ք այն հաստատություններին որոնք հաստատել են վարկը (այնուհետեւ նամակ ալ ուղարկե՛ք):
- Դանգատ ներկայացրե՛ք ոստիկանությանը:
- Դանգատ ներկայացրե՛ք մեծագոյն վարկային հաստատութիւնների խարդախության գրասենեակնիրը խնդրելով որ անոնք.
  - Նշանակեն ձեր հաշիվը, պահանչելու ապագայի վարկատուներից որ նախքան ձեր անվան, ազգանվան եւ համարի օգտագործման վարկ հաստատելը ձեզ հետ անձամբ կապ հաստատեն.
  - Բացատրեն ձեզ թէ որքան ժամանակ ձեր հաշիվը նշանակուած մնալու է եւ անհրաժեշտության դեպքում որքան աւելի կարող են հետաձգել այն.
  - Տեղեկագիր մը ավելացնեն ձեր հաշիվի վրայ, նշելով ձեր անունն ու ազգանունը, ձեր խնդիրն ու վիճակը, եւ հեռախոսի համարը որով ձեզ կարող են զանգահարել:

(շրջել)

Յուրաքանչյուրից խնդրե՛ք ձեր անձնական վարկային փաստաթուղթի օրինակը եւ ստուգե՛ք, որպեսզի տեսնեք թե այն պարունակում է բոլոր տեղեկութիւնները որոնց մասին դուք տեղյակ եք: Եթե ձեր վարկ ստանալու դիմումները մերժում են, դուք իրավունք կունենաք ստանալու ձեր հաշվի անվճար օրինակը:

Մեծագոյն վարկային հաստատություններն են

«Էքվիֆաքս» (Equifax)
www.equifax.com
Խարդախությունը յայտնեցեք.
1-800-525-6285
Պահանջեք վարկային փաստաթուղթ.
1-800-685-1111
P.O. Box 740241
Atlanta, GA 30374-0241

«Էքսփերյան» (Experian)
www.experian.com
Խարդախությունը յայտնեցեք.
1-888-397-3742
Պահանջեք վարկային փաստաթուղթ.
1-888-EXPERIAN
(1-888-397-3742)
P.O. Box 1017
Allen, TX 75013-0949

«ԹրանսՅունյոն» (TransUnion)
www.tuc.com
Խարդախությունը յայտնեցեք.
1-800-680-7289
Պահանջեք վարկային փաստաթուղթ.
1-800-916-8800

Fraud Victim Assistance Department
(Խարդախության զոհերի օգնության բաժին)
P.O. Box 6790
Fullerton, CA 92834

Սոցիալական Ապահովության նոր համար ստանալը

Եթե դուք ամեն ինչ արել եք շտկելու համար այս խնդիրը, բայց տակաւին ուրիշ անձ մը օգտագործում է ձեր համարը, մենք կարող ենք նոր համար տալ ձեզ: Մենք չենք կարող վստահեցնել ձեզ թե այս նոր համարը կլուծի ձեր խնդիրները:

Դուք **չեք** կարող ստանալ Սոցիալական Ապահովության նոր համար, եթե.

- Դուք դիմել եք սնանկության.
- Դուք մտադիր եք ձեր օրինական պարտավորություններից փախչիլ կամ օրենքից պահվտիլ
- Ձեր Սոցիալական Ապահովության համարի քարտը կորել է կամ գողացվել՝ սակայն չկա ոչ մի վկայություն փաստելու թե մի անձ օգտագործում է ձեր համարը:

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Ինքնաշխատ հեռաձայնային

ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Եթե Թարգմանիչի Պետք Ունեք. Մենք ձեզ համար անվճար թարգմանիչ կարող ենք տրամադրել որպեսզի դուք կարողանաք մեզ հետ ձեր գործերը կատարել: Այս թարգմանչական ծառայությունը կարող եք գտնել մեր գրասենյակներում եւ հեռաձայնի վրայ: Զանգահարեցե՛ք մեզ հետեւյալ թվին **1-800-772-1213** եւ ճնշե՛ք թիւ մեկը: Հեռաձայնը պատասխանող ներկայացուցիչը միացնում է ձեզ թարգմանիչի հետ որպեսզի ան օգնէ ձեզի: Եթե չ՚կարողացանք հեռաձայնով օգտակար լինել, ժամադրություն ենք տալիս որպեսզի դուք այցելեք ձեր տեղական գրասենյակը որտեղ ներկայ կը լինի նաեւ թարգմանիչը:

Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-10064-AM
Identity Theft And Your Social Security Number (Armenian)
January 2006